«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝Նալբանդյան Թերեզա

Ուսումնական հաստատություն՝ Համո Սահյանի անվան թիվ 70 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....5

Գրականության ակնարկ.....5

1. Կրտսեր դպրոցականի դպրոց ինտեգրման դժվարությունները և դրանց հաղթահարումը.....8
2. Վեց տարեկանների հոգեկան զարգացումն ու ուսուցման կազմակերպումը.....11

Եզրակացություն……15

Օգտագործված գրականության ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Դպրոցին անձնային պատրաստվածությունը ներառում է նաև որոշակի վերաբերմունք սեփական անձի նկատմամբ: Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է ադեկվատ վերաբերմունք սեփական ընդունակությունների, աշխատանքային արդյունքների, վարքի նկատմամբ, այսինքն՝ ինքնագիտակցության զարգացվածության որոշակի մակարդակ: Դպրոցականի ինքնագնահատականը չպետք է լինի շատ բարձր և չտարբերակված:

6 տարեկան երեխայի անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Ուսման խնդիրներին համապատասխանող ճանաչողական դրդապատճառները դեռ անկայուն և իրավիճակային են, դրա համար էլ դասերի ժամանակ երեխաների մեծամասնության մոտ այն դրդապատճառները դրսևորվում և պահպանվում են ուսուցչի ջանքերի շնորհիվ:

Նշենք, որ հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին բարդ կազմավորում է, որը պահանջում է դրդապատճառային, ինտելեկտուալ, կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ: Սովորաբար առանձնացնում են հոգեբանական պատրաստվածության երկու ասպեկտներ՝ անձնային և ինտելեկտուալ: Երկուսն էլ կարևոր են ինչպես ուսումնական գործունեության հաջող ընթացքի, այնպես էլ նոր պայմաններին արագ հարմարման համար:

Ընդ որում նշենք, որ նոր սոցիալական դիրքի նկատմամբ երեխայի ձգտումը նախադրյալ է և հիմք կրտսեր դպրոցական տարիքում հոգեբանական շատ առանձնահատկությունների կայացման համար: Մասնավորապես, պատասխանատվությունը դպրոցական պարտականությունների կատարման համար՝ երեխան սկսում է կատարել ոչ միայն իրեն հետաքրքիր առաջադրանքները, այլև ցանկացած ուսումնական աշխատանք:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական **խնդիրները.**

- ուսումնասիրել կրտսեր դպրոցականի դպրոց ինտեգրման դժվարությունները և դրանց հաղթահարումը,
- ներկայացնել վեց տարեկանների հոգեկան զարգացումն ու ուսուցման կազմակերպումը:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 17 տպագրական էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Մենք ապրում ենք 21-րդ դարում, որտեղ կարևորվում է դաստիարակությունը և կրթության կազմակերպման համար մանկավարժները և հոգեբանները ստիպված են լինում կիրառել նոր՝ ավելի արդյունավետ հոգեբանամանկավարժական մոտեցումներ և մեթոդներ՝ նպատակ ունենալով ուսուցման մեթոդները համապատասխանեցնել կյանքի պահանջներին:

Երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման հարցերն ու դրանց լուծումները արդիական և խիստ կարևոր են հոգեբանների, մանկավարժների, ծնողների, երեխաների կրթությամբ զբաղվող մասնագետների համար: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ դպրոց ընդունվելը երեխայի կյանքում բեկումնային պահ է, անցում կյանքի նոր կենսաձևի և գործունեության պայմանների[1]:

Ուսումն ու ուսումնառությունը, որը դպրոցականի համար միանգամայն նոր կարգավիճակ է ապահովում, դառնում է պարտադիր, հասարակական նշանակություն ունեցող գործունեություն, որի համար երեխան պատասխանատվություն է կրում ընտանիքի, ուսուցիչների և դպրոցի առջև:

Հոգեբանության մեջ երեխաների դպրոցի ուսուցման պատրաստվածության հիմնախնդրին անդրադարձել են բազմաթիվ մեծանուն մանկավարժներ և հոգեբաններ, որոնց թվին են դասվում՝ Լ. Ս. Վիգոտսկին, Լ. Ի. Բոժովիչը, Ա. Վ. Զապորոժեցան, Դ. Բ. Էլկոնինան և այլոք:

Առաջին անգամ այս խնդրին անդրադարձ կատարվեց 1940-ական թվականների վերջին, երբ ծնողները սկսեցին երեխաներին դպրոց ուղարկել 7 տարեկանից (նախկինում երեխաները դպրոց էին հաճախում 8 տարեկանում):

Այդ ժամանակից ի վեր երեխայի դպրոցին պատրաստվածության խնդրի ուսումնասիրումը չի դադարում վրիպել հոգեբանների և մանկավարժների աչքից: Ուսումնասիրությունների երկրորդ ալիքը սկսվեց 1983-ականներին, որտեղ կրկին ուշադրության կենտրոնում էր երեխաներին հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին:

[1]Гуткина Н.И., Психологическая готовность к школе, М., 1993, С. 87.

Հոգեբանները նշում են, որ հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին բարդ կազմավորում է, որը պահանջում է դրդապատճառային, ինտելեկտուալ, կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ:

Վ. Ս. Մուխինան նշում է, որ դպրոցին հոգեբանական պատրաստվածության դիագնոստիկան բավական բարդ, սակայն միանգամայն լուծելի խնդիր է: Նրա խոսքով դպրոցական պատրաստվածությունը, կախված ուսման մեջ հաջող սկզբի հետ, պայմանավորում է երեխաների զարգացման առավել բարենպաստ տարբերակը[2]:

Ս. Ի. Գեսսենը նշում է, որ ուսուցման գործընթացում ավելի հեշտ է զարգացնել ինտելեկտուալ, քան անձնային առանձնահատկությունները: Ըստ երևույթի, դա այդպես է: Ամեն դեպքում դպրոցին անբավարար անձնային պատրաստվածության դեպքում ուսուցչի մոտ առաջանում են բավականին բարդ խնդիրներ[3]:

Լ. Ի. Բոժովիչը նշում է, որ որպեսզի երեխան հաջողությամբ սովորի, նա առաջին հերթին պետք է ձգտի նոր դպրոցական կյանքին: Նրա խոսքով այսպիսի ցանկության առաջացման վրա ազդում է ուսման՝ որպես կարևոր, բովանդակային գործունեության նկատմամբ, մոտիկ մեծահասակների վերաբերմունքը[4]:

Դպրոց ընդունվող երեխայի համար կարևոր է նաև ուսուցչի, տարիքակիցների և իր նկատմամբ վերաբերմունքը:

Ե. Ե. Կրավցովան նշում է, որ հենց յոթամյա երեխան դասարան է մտնում, նա դառնում է դպրոցական: Այս պահից սկսած խաղը նրա կյանքում աստիճանաբար կորցնում է իր առաջատար դերը, թեև շարունակում է կարևոր տեղ զբաղեցնել նրանում[5]:

Նրա խոսքով այս շրջանում երեխայի համար առաջատար է դառնում ուսումնական գործունեությունը, որը էական փոփոխություններ է մտցնում նրա վարքի մոտիվացիայում, և նրա իմացական ու բարոյական ուժերի զարգացման նոր աղբյուրներ է բացահայտում:

Դպրոց երեխաներին ընդունելիս, որոնց ուսումնական ծրագրերը չափազանց բարդ են, օգտագործվում են առավել բարդ մեթոդիկաներ: Վերլուծության, սինթեզի բարդ մտածական գործընթացներն ուսումնասիրվում են երեխաների կողմից ասացվածքների

---

[2]Мухина В. С., Шестилетний ребенок в школе. М.,1986, С. 74.
[3]Гессен С.И., Основы педагогики. М.,1995, С. 101.
[4]Божович Л.И., Личность и ее формирование в детском возрасте. М.,1968, С. 74.
[5]Кравцова Е.Е., Психологические проблемы готовности детей к обучению в школе. М.,1993, С. 45.

մեկնաբանման միջոցով։ Ասացվածքների մեկնաբանման հայտնի մեթոդիկան ունի հետաքրքիր տարբերակ՝ առաջադրված Բլյումա Զեյգարնիկի կողմից։

1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴՊՐՈՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

Հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին բարդ կազմավորում է, որը պահանջում է դրդապատճառային, ինտելեկտուալ, կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ: Սովորաբար առանձնացնում են հոգեբանական պատրաստվածության երկու ասպեկտներ՝ անձնային և ինտելեկտուալ: Երկուսն էլ կարևոր են ինչպես ուսումնական գործունեության հաջող ընթացքի, այնպես էլ նոր պայմաններին արագ հարմարման համար:

Դպրոցին անձնային պատրաստվածությունը ներառում է որոշակի վերաբերմունք սեփական անձի նկատմամբ: Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է ադեկվատ վերաբերմունք սեփական ընդունակությունների, աշխատանքային արդյունքների, վարքի նկատմամբ, այսինքն՝ ինքնագիտակցության զարգացվածության որոշակի մակարդակ: Դպրոցականի ինքնագնահատականը չպետք է լինի շատ բարձր և չտարբերակված:

Դպրոցին երեխայի պատրաստվածության մասին սովորաբար դատում են խմբային աշխատանքներում նրա վարքով: Այստեղ շատ կարևոր է և երեխայի կամային ոլորտի զարգացման առանձնահատկությունների դուրս բերումը: Երեխայի վարքի կամային բնույթը դրսևորվում է ուսուցչի առաջադրած պահանջների, կանոնների կատարման ժամանակ: Դրա համար էլ երեխայի կամային վարքի առանձնահատկությունները դուրս են բերվում ոչ միայն դիտման ժամանակ, այլև հատուկ մեթոդիկաների միջոցով:

Ինտելեկտուալ պատրաստվածությունը կապված է մտավոր գործընթացների զարգացման հետ. ընդհանրացնելու, օբյեկտները համեմատելու, դասակարգելու, նրանց էական առանձնահատկությունները դուրս բերելու, պատճառա-հետևանքային կապերը գտնելու, եզրակացություններ կատարելու ընդունակություններ: Երեխան պետք է ունենա լայն պատկերացումներ՝ պատկերային, տարածական, խոսքի զարգացման համապատասխան մակարդակ, ճանաչողական ակտիվություն:

Կապված որոշակի անձնային առանձնահատկությունների հետ՝ երեխաները կարող են նշանակալից դժվարություններ ունենալ դպրոցում: Ինչպես օրինակ, տագնապայնությունը, որը կայունություն է ձեռք բերում երեխայի աշխատանքով

անընդհատ դժգոհության պայմաններում: Տագնապայնության աճի և նրա հետ կապված ցածր ինքնագնահատականի պատճառով նվազում են ուսումնական ձեռքբերումները: Ստացվում է, որ երեխայի անբարենպաստ անձնային առանձնահատկություններն ուղղակիորեն ազդում են նրա ուսումնական գործունեության վրա, ինչը առաջ է բերում շրջապատողների համապատասխան բացասական ռեակցիան, որն էլ իր հերթին ուժեղացնում է երեխայի առանձնահատկությունները: Այսպիսի իրավիճակից խուսափելու համար պետք է փոխել ծնողների և ուսուցիչների գնահատականներն ու դիրքորոշումները:

Ն. Գ. Սալմինան նշում է, որ երեխան իսկապես դառնում է դպրոցական այն ժամանակ, երբ ձեռք է բերում համապատասխան ներքին դիրք: Նա ներառվում է իր համար նշանակալից ուսումնական գործունեության մեջ՝ կողնորոշվելով այն բանի հասարակական արժեքի վրա, ինչ անում է[6]:

Երեխայի դպրոցին հոգեբանական պատրաստվածության բաղադրիչներն են.

1. մոտիվացիան (հարմարումը),
2. ուսումնական խնդիրը,
3. ուսումնական օպերացիաները:

Առաջին բաղադրիչը մոտիվացիան է: Ուսումնական գործունեությունը բազմադրդապատճառականցված է, որը դրդվում և ուղղորդվում է ուսումնական տարբեր դրդապատճառներով: Նրանցում կան դրդապատճառեր՝ առավել ադեկվատ ուսումնական խնդիրներին՝ եթե նրանք ձևավորվում են աշակերտի մոտ, նրա ուսումնական գործունեությունը դառնում է արդյունավետ, իմաստավորված: Լ. Բոժովիչը դրանք անվանել է ուսումնա-ճանաչողական դրդապատճառներ[7]: Նրանց հիմքում ընկած են ճանաչողության և ինքնազարգացման պահանջմունքները: Երեխան պետք է մոտիվացված լինի ոչ միայն ուսումնական գործունեության արդյունքով այլև հենց նրա գործընթացով: Սա նաև սեփական անձնային աճի, ինքնակատարելագործման, ընդունակությունների զարգացման դրդապատճառն է:

Երկրորդ բաղադրիչը ուսումնական խնդիրն է, այսինքն՝ առաջադրանքների համակարգը որոնց կատարման ընթացքում երեխան յուրացնում է գործողությունների

[6]Салмина Н.Г., Знак и символ в обучении.М., 1988, С. 71.
[7]Божович Л.И., Личность и его формирование в детском возрасте, М.,1968, С. 59.

առավել ընդհանուր միջոցներ։ Ուսումնական խնդրիրը անհրաժեշտ է տարբերել առանձին առաջադրանքներից։ Սովորաբար երեխաները, լուծելով մեծ քանակությամբ կոնկրետ առաջադրանքներ, իրենք են տարերայնորեն բացահայտում նրանց լուծման ընդհանուր միջոցը, ընդ որում այն միջոցը տարբեր աշակերտների կողմից գիտակցվում է տարբեր չափով։ Զարգացնող ուսուցումը ենթադրում է երեխաների և ուսուցչի կողմից խնդիրների մի մեծ խմբի լուծման միջոցի համատեղ բացահայտում և ձևակերպում։ Այս դեպքում ընդհանուր միջոցը դառնում է օրինակ և հեշտ տարածվում է այդ դասի այլ առաջադրանքների վրա, ուսումնական գործունեությունը դառնում է առավել արդյունավետ, իսկ սխալներն աստիճանաբար վերանում են։

Ուսումնական օպերացիաները երրորդ բաղադրիչն են և մտնում են գործողությունների միջոցի մեջ։ Օպերացիան և ուսումնական խնդիրը ուսումնական գործունեության կառուցվածքի հիմնական օղակն են։ Յուրաքանչյուր ուսումնական օպերացիա պետք է մշակված լինի։ Աշակերտը, կողմնորոշվելով օպրեացիաների կազմում, կատարում է դրանք նյութականացված՝ ուսուցչի վերահսկողության տակ։ Սովորելով դա անել գրեթե անսխալ՝ նա անցում է կատարում արտասանմանը, և վերջապես, օպերացիաների կազմի կրճատման փուլում նա արագ լուծում է խնդիրը մտքում՝ հաղորդելով ուսուցչին պատրաստի պատասխանը։

Ուսումնական գործունեությունն, ունենալով բարդ կառուցվածք, անցնում է կայացման երկարատև ուղի։ Նրա զարգացումը շարունակվում է ամբողջ դպրոցական կյանքի ընթացքում, բայց հիմքերը դրվում են ուսուցման սկզբնական տարիներին։ Դպրոցական ուսուցանումը տարբերվում է ոչ միայն երեխայի գործունեության հատուկ սոցիալական նշանակալիությամբ, այլև մեծերի օրինակների և գնահատականների հետ հարաբերությունների միջնորդավորվածությամբ։ Այս առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնական գործունեության յուրահատկությունը ազդում են երեխայի հոգեկան ֆունկցիաների, անձնային կազմավորումների, կամային վարքի զարգացմանը։

2. ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Դպրոցը սոցիալ–մանկավարժական համակարգ է, որի կրթական միջավայրում աշակերտներն ինտեգրվում են ուսումնական, սոցիալ–մշակութային և հոգեբանական հարմարման արդյունքում:

Սովորողների՝ կրթական նոր միջավայրում ակտիվ ինտեգրման գործընթացում ձևավորվում են ուսումնական գործունեության արդյունավետ իրականացման նոր կարողություններն ու հմտությունները, խմբային և անհատական ուսումնահետազոտական աշխատանքի ձևերի յուրացումը:

Ակնհայտ է, որ դպրոցի մանկավարժական կարևորագույն խնդիրն է հատկապես առաջին դասարանցիների հետ աշխատանքը՝ ուղղված նոր համակարգում նրանց արագ և արդյունավետ ինտեգրմանը, սոցիալական հարաբերությունների նոր համակարգում հարմարմանը, սոցիալական նոր դերի յուրացմանը:

Դպրոցի խնդիրն է սովորողի համար կենսական այդ բարդ փուլում աջակցել նրան՝ ուսուցման նոր պայմաններում որքան հնարավոր է արագ ինտեգրվելու աշակերտության շարքերում: Չնայած նպատակային, բովանդակային և գործընթացային բաղադրատարրերում գոյություն ունեցող տարբերություններին՝ կրթական յուրաքանչյուր աստիճանում հարմարման և ինտեգրման գործընթացները բնութագրվում են ընդհանուր և առանձնահատուկ տարբերություններով, որոնք արտացոլում են կրթական տարբեր աստիճանների կապակցվածության, շարունակականության և սահուն անցման հիմնախնդիրը:

Դպրոցական կյանքի առաջին շրջանում են ձևավորվում կրթական դրդապատճառները, որոնք հիմնվում են արժեքային կողմնորոշումների, կենսական իդեալների, պահանջմունքների վրա: Այս տարիքում կենսական ներուժը կենտրոնանում է նոր փոխհարաբերությունների, շփումների, հաղորդակցական ոլորտի ընդլայնմանը, սովորողի սոցիալական դերի յուրացմանը: Սկսվում է ակտիվ կենսադիրքի, աշխարհայացքի ձևավորման շրջանը, աճում են սոցիալ–հոգեբանական և մշակութային պահանջմունքները[8]:

[8]Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Եր., Տոներ, 2005, 72 էջ:

Էականորեն փոխվում է երեխաների հուզական ոլորտը: Նոր միջավայրում կոլեկտիվի ձևավորումն ընթանում է աշակերտի անհատականացման ներքին մղմամբ՝ առաջնային են դառնում նոր միջավայրում ինքնահաստատման, երբեմն մյուսներից տարբերվելու, հեղինակություն ձեռք բերելու, ինքնատիպ լինելու ցանկությունը, խմբային գործունեության մեջ իր յուրովի դերակատարումն ունենալու միտումը[9]:

Կրտսեր դպրոց ընդունելությունը կապված է կյանքի, գործունեության և կենցաղի էական փոփոխությունների հետ:

Ե. Գինգելը գրում է, որ *առաջին դասարանի աշակերտների հարմարումն ընթանում է մի քանի փուլերով՝ հարմարում ուսուցման նոր համակարգին, հարմարում նոր ռեժիմի փոփոխությանը, ինտեգրում նոր կոլեկտիվում*[10]: Դպրոցի կրթադաստիարակչական միջավայր ինտեգրման գործընթացում առկա են հետևյալ դժվարությունները.

1. կյանքի սովորական ռիթմի փոփոխությունը,
2. հուզական ապրումները՝ կապված նախադպրոցական, խաղային կոլեկտիվից հեռանալու հետ,
3. նոր պայմաններում խաղի, հանգստի և ուսուցման օպտիմալ ռեժիմի պահպանման կարողությունների ոչ բավականաչափ ձևավորվածությունը,
4. ինքնակառավարման ցածր մակարդակը,
5. ուսումնական գործունեությամբ ծանրաբեռնվածությունը, որը շատ հաճախ նյարդահոգեկան լարվածություն է առաջացնում,
6. տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հետ կապված դժվարությունը,
7. համադասարանցիների և ուսուցիչների ներկայությամբ հրապարակավ ելույթ ունենալու վախը, կաշկանդվածությունը, հաղորդակցման հմտությունների պակասը, համադասարանցիների և ուսուցիչների հետ հաղորդակցման, հարաբերություններ ձևավորելու անվճռականությունը,
8. նոր միջավայրում հոգեբանական անհարմարավետությունը, հաճախումների ամենօրյա վերահսկողության գործընթացից դժգոհությունը և այլն:

Բնականաբար, նշված դժվարություններն ի հայտ են բերում ֆիզիոլոգիական, կենսաբանական, սոցիալ–մշակութային և հոգեբանական բազմաթիվ գործոններ, որոնք

[9]Азаров Ю., Студент: возможности личного роста. Высшее образование в России, 2002, N1, С. 50.
[10]Гингель Е., Диалог как фактор адаптации первокурсников. Высшее образование в России, 2007, N 9, С. 158.

էական փոփոխություններ են առաջացնում երեխաների վարքի և գործունեության՝ տարիների ընթացքում ձևավորված կարծրատիպերի մեջ: Քանի որ միջավայրի և գործունեության ձևերի փոփոխությունը բարդ գործընթաց է, ապա նրանում առանձնացվում են այդ միջավայրում ինտեգրման և հարմարման՝ միմյանց հաջորդող մի քանի փուլեր և շրջաններ:

Ի. Ն. Սիմաևան *առանձնացնում է կրթական գործընթացում սովորողների հարմարման հետևյալ փուլերը՝ ֆիզիոլոգիական (մոտ երկու շաբաթ), հոգեբանական (մոտ երկու ամիս), սոցիալ–հոգեբանական (մինչև երեք տարի)*[11]*:* Օ. Վ. Գլինկինան *առաջադրում է սովորողների հարմարման երեք փուլ՝ նախնական, ընդհանուր և առարկայական–մասնագիտական*[12]*:*

Ա. Յու. Պետրովն առանձնացնում է սոցիալ–մշակութային նոր միջավայրում առաջին դասարանցու հարմարման հետևյալ փուլերը.

1. Նախնական փուլ՝ անհատը կամ խումբը գիտակցում է, որ պետք է համապատասխան վարքագիծ դրսևորի նոր միջավայրում, սակայն դեռևս պատրաստ չէ այդ միջավայրում ընդունված նորմերն ու արժեքներն ընդունելու:
2. Խմբի անդամները դրսևորում են փոխըմբռնում և փոխադարձ հանդուրժողականություն միմյանց վարքի նկատմամբ:
3. Ակկոմոդացիա, այսինքն՝ անհատն ընդունում է նոր միջավայրում ընդունված որոշ արժեքներ և նորմեր, դրսևորում նոր խնդիրներին, պահանջներին համապատասխան վարք:
4. Ասիմիլյացիա, այսինքն՝ խմբի, անհատի և միջավայրի արժեքների լիակատար համընկնում[13]:

Հոգեբանական տեսանկյունից կրթական միջավայրում հարմարման գործընթացն իրականանում է չորս փուլով:

Առաջին՝ նախապատրաստական փուլը կապված է առաջին դասարանցու ինքնորոշման և հոգեբանական պատրաստության ձևավորվածության հետ՝ հաղթահարելու համար դպրոցում հարմարման առաջին շրջանում առկա

[11]Симаева И. Н., Динамика эмоционально – чувственного состояния личности в процессе адаптации к деятельности, Калининград, Изд–во КГУ, 2002, С. 129.
[12]Глинкина О. В., Адаптация первокурсника. Профессиональное образование, 2002, N9, С. 12–16.
[13]Петров А. Ю., Профессиональная адаптация студентов вуза: Монография, Челябинск: Изд–во Чел. Академии культуры и искусства, 2004, С. 185.

դժվարությունները: Երկրորդ՝ կողմնորոշիչ փուլը կապված է տվյալ դպրոցի առանձնահատկությունների, դպրոցի ավանդույթների, ներքին կանոնների, նորմերի, պահանջների յուրացման հետ: Երրորդ՝ գնահատողական փուլում սովորողներն իմաստավորում են իրենց կրթական համոզմունքները[14]:

Վ. Պ. Կոնդրատովան *դիտարկում է կրտսեր դպրոցում աշակերտների հարմարման հետևյալ երեք փուլերը.*

1. առաջին փուլում իրականանում է դպրոցի կրթական միջավայրի նոր պայմաններին օրգանիզմի պատասխան հոգեկան հակազդում, որը տարբեր անհատների համար տարբեր տևողություն ունի, սակայն հիմնականում ավարտվում է առաջին կիսամյակի ընթացքում,
2. երկրորդ փուլը ներառում է հարմարողական մեխանիզմների և հոգեկան գործընթացների վերակառուցումն ըստ միջավայրի պահանջների և ավարտվում է երկրորդ կիսամյակում,
3. երրորդ փուլը կայուն հարմարման փուլն է, երբ ավարտվում են հարմարողական հակազդումները. սովորաբար այդ փուլն ավարտվում է առաջին դասարանի վերջում[15]:

Մեր կարծիքով դպրոցի կրթական միջավայր ինտեգրման կարևոր պայմաններ են սովորողի հաղորդակցման մակարդակը, ուսուցչի աջակցությունը: Կարևոր են նաև սովորողի անձնային առանձնահատկությունները, հուզական ներաշխարհը, բնավորությունը, խառնվածքը, բարոյակամային որակները, հետաքրքրությունները, պատկերացումները, աշխարհընկալումը, հակումները, ինքնակառավարման կարողությունը:

[14]Петров А. Ю.,Նշված աշխ., էջ 186:

[15]Кондратова В. П., Некоторые психологические показатели адаптации студентов–первокурсников к условиям в вузе. Вопросы вузовской педагогики, психологии и дадактики, Воронеж, 1982, С. 54.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ դպրոցին անձնային պատրաստվածությունը ներառում է որոշակի վերաբերմունք սեփական անձի նկատմամբ: Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է ադեկվատ վերաբերմունք սեփական ընդունակությունների, աշխատանքային արդյունքների, վարքի նկատմամբ, այսինքն՝ ինքնագիտակցության զարգացվածության որոշակի մակարդակ: Դպրոցականի ինքնագնահատականը չպետք է լինի շատ բարձր և չտարբերակված:
- Դպրոցին երեխայի պատրաստվածության մասին սովորաբար դատում են խմբային աշխատանքներում նրա վարքով: Այստեղ շատ կարևոր է և երեխայի կամային ոլորտի զարգացման առանձնահատկությունների դուրս բերումը: Երեխայի վարքի կամային բնույթը դրսևորվում է ուսուցչի առաջադրած պահանջների, կանոնների կատարման ժամանակ: Դրա համար էլ երեխայի կամային վարքի առանձնահատկությունները դուրս են բերվում ոչ միայն դիտման ժամանակ, այլև հատուկ մեթոդիկաների միջոցով:
- Ինտելեկտուալ պատրաստվածությունը կապված է մտավոր գործընթացների զարգացման հետ. ընդհանրացնելու, օբյեկտները համեմատելու, դասակարգելու, նրանց էական առանձնահատկությունները դուրս բերելու, պատճառա-հետևանքային կապերը գտնելու, եզրակացություններ կատարելու ընդունակություններ: Երեխան պետք է ունենա լայն պատկերացումներ՝ պատկերային, տարածական, խոսքի զարգացման համապատասխան մակարդակ, ճանաչողական ակտիվություն:
- Դպրոցի խնդիրն է սովորողի համար կենսական այդ բարդ փուլում աջակցել նրան՝ ուսուցման նոր պայմաններում որքան հնարավոր է արագ ինտեգրվելու աշակերտության շարքերում: Չնայած նպատակային, բովանդակային և գործընթացային բաղադրատարրերում գոյություն ունեցող

տարբերություններին՝ կրթական յուրաքանչյուր աստիճանում հարմարման և ինտեգրման գործընթացները բնութագրվում են ընդհանուր և առանձնահատուկ տարբերություններով, որոնք արտացոլում են կրթական տարբեր աստիճանների կապակցվածության, շարունակականության և սահուն անցման հիմնախնդիրը:

- Դպրոցական կյանքի առաջին շրջանում են ձևավորվում կրթական դրդապատճառները, որոնք հիմնվում են արժեքային կողմնորոշումների, կենսական իդեալների, պահանջմունքների վրա: Այս տարիքում կենսական ներուժը կենտրոնանում է նոր փոխհարաբերությունների, շփումների, հաղորդակցական ոլորտի ընդլայնմանը, սովորողի սոցիալական դերի յուրացմանը: Սկսվում է ակտիվ կենսադիրքի, աշխարհայացքի ձևավորման շրջանը, աճում են սոցիալ–հոգեբանական և մշակութային պահանջմունքները;
- Էականորեն փոխվում է երեխաների հուզական ոլորտը: Նոր միջավայրում կոլեկտիվի ձևավորումն ընթանում է աշակերտի անհատականացման ներքին մղմամբ՝ առաջնային են դառնում նոր միջավայրում ինքնահաստատման, երբեմն մյուսներից տարբերվելու, հեղինակություն ձեռք բերելու, ինքնատիպ լինելու ցանկությունը, խմբային գործունեության մեջ իր յուրովի դերակատարումն ունենալու միտումը;

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Եր., Տոներ, 2005թ.:
2. Азаров Ю., Студент: возможности личного роста. Высшее образование в России, 2002, N1.
3. Божович Л.И., Личность и ее формирование в детском возрасте. М.,1968.
4. Гуткина Н.И., Психологическая готовность к школе, М., 1993.
5. Гессен С.И., Основы педагогики. М.,1995.
6. Гингель Е., Диалог как фактор адаптации первокурсников. Высшее образование в России, 2007, N 9.
7. Глинкина О. В., Адаптация первокурсника. Профессиональное образование, 2002, N9.
8. Кравцова Е.Е., Психологические проблемы готовности детей к обучению в школе. М.,1993.
9. Кондратова В. П., Некоторые психологические показатели адаптации студентов–первокурсников к условиям в вузе. Вопросы вузовской педагогики, психологии и дадактики, Воронеж, 1982.
10. Мухина В. С., Шестилетний ребенок в школе. М.,1986.
11. Петров А. Ю., Профессиональная адаптация студентов вуза: Монография, Челябинск: Изд–во Чел. Академии культуры и искусства, 2004.
12. Салмина Н.Г., Знак и символ в обучении.М., 1988.
13. Симаева И. Н., Динамика эмоционально – чувственного состояния личности в процессе адаптации к деятельности, Калининград, Изд–во КГУ, 2002.